ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայակովսկի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովից

03 .06 . 2011թ. գյուղ Մայակովսկի

2011 թվականի հունիսի 3-ին տեղի է ունեցել Մայակովսկի համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ

1. Ա. Բարսեղյան
2. Ա. Հարությունյան
3. Հ.Հարությունյան
4. Է. Մանուկյան

/

Համայնքի ղեկավարի աշխատակազմից

1. Բ. Մարտիրոսյան / համայնքի ղեկավարի տեղակալ/
2. Ա. Հարությունյան / առաջատար մասնագետ /
3. Վ. Փայտյան / աշխատակազմի քարտուղար/
4. Գ. Ասատրյան /1-ին կարգի մասնագետ/

Համայնքի բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ: Մայակովսկի համայնքի 01.10. 2010- 01.06.2011թթ ընկած ժամանակահատվածում համայնքի ղեկավարի և ավագանու կատարված աշխատանքների մասին (զեկ Վ. Բարսեղյան)

2010թ. բյուջեի եկամուտները կազմել են 34104.4 դրամ, ծախսերը 35259,7 դրամ :

Պակասուրդը կազմել է 1078,3 դրամ , որը լրացվել է համայնք բյուջեի մնացորդի հաշվին:Մայակովսկու վարչական տարածքում գտնվող հողի հարկի չափը 2010թ.-ի համար կազմել է 6180,0 : 2010թ. հողի հարկը հավաքարվել է 105%-ով : 136 տնտեսություններ օգտվել են հողի հարկի արտոնություններից , որոնց նախկինում կուտակված պարտքերի տուգանքները զրոյացվել են :

2010թ. գույքային հարկեր ը հավաքագրվել են 107,0 %-ով , բացարձակ թվով կազմել է 4850,1 դրամ : 2010թ. դեկտեմբերի 25-ին համայնքի ավագանին ընդունել է 2011թ. բյուջեն , ըստ որի եկամուտները կազմել են 35155,2 դրամ ,ծախսերը ՝

37266,7, որից 2111,5 դրամը լրացվել է տարեսկզբի մնացորդի հաշվին :

հողի հարկը տարեկան ցուցանիշով կզմել է 6 000,18 դրամ : Առաջին եռամսակում կազմել է 10001,7 դրամ , որի դիմաց առաջին եռամսյակում հավաքագրվել է 734,7 դրամ , որը կազմում է տարեկան պլանի 8%-ը, իսկ առաջին եռամսյակի 67%-ը : 2010թ-ի համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է ՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 3205,0 դրամի օգնություն :

Կրթության մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի երիտասարդները մասնակցել են «Կոտայք-Բազե» 2011 թ երիտասարդական հավաքին , որի համար փոխանցվել է 320 000 դրամ գումար :

Հուշարձանի պահպանման և վերանորոգման աշխատանքների համար 2010թ. ծախսվել է 1434,5 դրամ , վերակառուցվել է համայնքի հայրենական պատերազմի մասնակիցներին նվիրված հուշաձանը :

Ոռոգման ցանցի կապիտալ վերանորոգման համար ծախսվել է 1820,0 դրամ, որը ինչ-որ չափով թեթևացրել է գյուղացու հոգսը :Կամրջի վերանորոգման աշխատանքների համար տրամադրվել է 3461 դրամ առաին եռամսյակում ծախսվել է 2195 ,7 դրամ : Մնացած աշխատանքները կկատարվեն երրորդ և չորրորդ եռամսյակի ընթացքում :

ԵԼՈՒՅԹՆԵՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1. Համայնքի բնակիչները ուղղեցին մի շարք հարցեր , որոնք վերաբերվում էին գյուղատնտեսությանը (հատկապես բողքում էին պարարտանյութի գներից , որը անհասանելի է բնակչությանը):Առաջարկություններ եղան համայնքի նոր թաղամասի

փողոցների բարեկարգման , կոյուղու անցկացման համար , մանկապարտեզի բացման , էլեկրայուններ ի անխիթար վիճակը բարելավելու մասին :

ՈՐՈՇՎԵՑ

1.Առաջիկայում գտնել համապատասխան միջոցներ / քանի որ ներկա վիճակում համայնքը չունի համապատասխան միջոցներ / նոր թաղամասի փողոցների բարեկարգման և կոյուղի անցկացնելու համար :

2. Մանկապարտեզի բացման կազմակերպում

3.էլեկտրայուների վիճակը բարելավելու համար դիմել համապատասխան վերադաս մարմիններին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ